

ԱՄԵՐԻԿԱՅԱՅ ԱՆԳԱԼԵԶՈՒ ՄԱՄՈՒԼԸ 1988 ԹՎԱԿԱՆԻՆ

Ակնարկը նվիրված է չուսումնասիրված, բայց կարևոր գործնական նշանակություն ունեցող թեմայի՝ Արցախյան ազատագրական պայքարի և դրա հետ առնչվող հարցերի լուսաբանմանը ամերիկահայ անգլալեզու մամուլում: Սփյուռքահայ բազմաթիվ թերթերից մենք նախընտրեցինք երեք առավել հետաքրքիր և հեղինակավոր հրատարակությունները, և հետագա ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ ընտրությունն արդարացված էր: Անհրաժեշտ է նշել, որ արդի պայմաններում Սփյուռքի հայկական մամուլն ապրում է դժվարին ժամանակներ: Ինչպես վկայում են իրենք՝ սփյուռքի քաղաքական կուսակցությունների ղեկավարները, սփյուռքահայության մեծամասնությունը քաղաքականացված չէ և հիմնականում մտահոգված է ժամանակակից աշխարհում գոյատևելու դժվարին խնդրով: Հատկապես քիչ է քաղաքականությամբ հետաքրքրվում երիտասարդությունը, որ նախընտրում է էլեկտրոնային լրատվական միջոցները: Այստեղից էլ փոքր պահանջարկը սովորական թերթերի նկատմամբ, որոնց տպաքանակը տարեց տարի նվազում է: Հայկական թերթերի մեծամասնությունը չի արդարացնում ծախսերը և ուղիղ կախում ունի զանազան բարեգործների լրավճարումներից, դրանք ֆինանսավորվում են մասնավոր անձանց կամ որևէ հիմնարկ-կազմակերպությունների կողմից: Խմբագրություններից շատերը ստիպված են դիմելու ռեստորանների, լվացատների, առևտրի կենտրոնների և խոշոր ձեռնարկությունների տերերին տարվա ընթացքում այս կամ այն խորագիր և անգամ առանձին հոդված կամ ֆոտոշարք ֆինանսավորելու համար: Այդ ամենը սփյուռքահայ մամուլը կախվածության մեջ է դնում բարեգործներից, որոնք իրենց իրավունք են վերապահում սեփական ճաշակը, կամքն ու քաղաքական հայացքները թելադրելու լրագրերի խմբագրություններին: Ինքնընտրության դա բացասաբար է անդրադառնում տպագրվող թերթերի որակի վրա: Դրանցում երբեմն հրատարակվում են հոդվածներ, որոնք համահունչ չեն տվյալ պարբերականի քաղաքական ուղղվածությանը, ինչն իր հերթին աններդաշնակություն է ծնում մեկ կամ մի քանի հաջորդական համարներում տպագրվող նյութերի միջև: Այստեղից ստեղծվում է տպավորություն, որ թերթերի խմբագրությունները չունեն հստակ ձևավորված դիրքորոշում այս կամ այն հարցի նկատմամբ:

Հայկական պարբերականների մյուս խնդիրները նույնպես բխում են ֆինանսական սուղ միջոցներից: Թերթերի խմբագրություններն ի վիճակի չեն

պահելու հաստիքային աշխատողների, որի պատճառով աշխատակազմը հիմնականում կազմված է թոշակային կամ նախաթոշակային տարիքի լրագրողներից, որոնք աշխատում են հասարակական հիմունքներով կամ ստանում են ցածր աշխատավարձ: Բանն այն է, որ ավագ սերնդի լրագրողները /որոնցից շատերը Սերժավոր Արևելքից են և անգամ չունեն համապատասխան կրթություն/ հնարավորություն չունեն աշխատանքի տեղավորվելու այլ, ավելի հեղինակավոր և լավ վարձատրվող թերթերում: Իսկ որակյալ կրթություն ստացած անգլալեզու երիտասարդությանը, որպես օրենք, չի հաջողվում ներգրավել աշխատանքի հայկական մամուլում, կամ նույնիսկ, եթե հաջողվում է, ապա միայն կարճ ժամանակով, այն էլ պայմանագրային հիմունքներով: Այստեղից էլ հրատարակվող թերթերի ցածր որակը և փոքր տպաքանակը:

Դրանից բացի սփյուռքահայ պարբերականները հայրենիքից թերթեր չէին ստանում և չունեին հատուկ թղթակիցներ Չայաստանում: Այստեղից սփյուռքահայ մամուլի թյուր և աղոտ պատկերացումները Չայաստանյան իրադարձությունների մասին: Այդ հարցում որոշ բեկում փորձում է մտցնել նաև Ամերիկյան Չայկական Համագումարը, որը վերջերս երևանում ստեղծել է տեղեկատվության հավաքման և մշակման կենտրոն: Վերջինիս նպատակն է որակյալ և ճշգրիտ տեղեկություններով ապահովել սփյուռքի մամուլը, այն հանձնել էլեկտրոնային տեղեկատվության միջոցների:

Ասվածից պարզորոշ երևում է սփյուռքահայ հայալեզու մամուլն ընդհանուր առմամբ շարունակում է մնալ անմխիթար վիճակում: Բացառություն են կազմում միայն քննության առարկա հանդիսացող «Armenian Reporter» («Արմինիան ընկողթեր»), «Armenian Mirror Spectator» («Արմինիան Սիրորո սփեքթեթթ»), և «Asbarez» («Ասբարեզ») շաբաթաթերթերը, որոնք ունենալով ֆինանսավորման համեմատաբար կայուն աղբյուրներ հրապարակվում են կանոնավոր և ունեն մշտական ընթերցողներ: Այդ թերթերը թե՛ 1980-ականների վերջերին, թե՛ այսօր, եղել և մնում է ամենակենսունակ և ամերիկահայության տարբեր խավերի և կուսակցությունների քաղաքական հայացքների իրական արտացոլքը: Այդ լրագրերը տարբերվում են արևմտյան ափում հրատարակվող Սփյուռքի մյուս տպագիր օրգաններից նրանով, որ որ այստեղ ավելի հաճախ կարելի է հանդիպել վերլուծական հրապարակումների, իսկ հայկական թեմատիկան ներկայացված է լայն պատմական խորապատկերում, առանց անտեսելու համամարդկային արժեքները: Բացի այդ, ի տարբերություն զավառական բնույթ ունեցող սփյուռքահայ շատ և շատ թերթերի, որոնցում տպագրվում էին միայն տեղական նշանակության նյութեր, նշված դարաշրջանում վերջիններում մեծ տեղ էր հատկացվում հորիզոնային

Հայաստանին, ԽՍՀՄ վերակառուցմանը, եկեղեցուն, լեզվին, մշակույթին, պատմությանը, Հայաստանի բնապահպանությանը և այլ հարցերին:

Բացի այդ, «Armenian Reporter», «Armenian Mirror Spectator» և «Asbarez» լրագրերը ունեն ևս մի շարք կարևոր առավելություններ: Շաբաթավերջյան հրապարակումները սովորաբար պարունակում են ստուգված և զտված նյութ և ի տարբերություն օրաթերթերի, այստեղ բաց են թողնված անմշան և ոչ էական անցքերը: Բացի այդ, այսօրինակ թերթերում, որպես կանոն, զետեղված է լինում անցած շաբաթվա ամենահետաքրքիր և կարևոր իրադարձությունների վերլուծությունը, որն անշուշտ, շատ հարմար է տվյալ դարաշրջանն ուսումնասիրող հետազոտողի համար: Նշենք նաև, որ անգլալեզու սփյուռքահայ մամուլում աշխատակցում էին առավել պրոֆեսիոնալ և կրթված լրագրողներ, որոնք պաշտոնապես որևէ խոշոր ամերիկյան թերթի կամ հանդեսների աշխատակիցներ էին, իսկ հայկական լրագրերում նրանք համագործակցում էին համատեղությամբ, հաճախ անհատույց /առավել ևս, որ խմբագրությունները հաճախ ի վիճակի չեն վարձատրել, նույնիսկ հաստիքային աշխատողների/: Նրանց պատրաստած նյութերը, ոչ միայն հետաքրքիր էին այլև գրված գեղեցիկ և հղկված անգլերենով: Անգլալեզու հայկական թերթերի երկրորդ կամ երրորդ սերնդի ամերիկահայ ընթերցողն ունենալով ավելի բարձր կրթական ցենզ և դաստիարակված լինելով ամերիկյան մամուլի լավագույն ավանդույթներով, բավականին պահանջկոտ էր հրապարակվող նյութերի որակի նկատմամբ: Թեև վերոհիշյալ պարբերականի ընթերցողները գլխավորապես հայեր էին, դրանք հաճախ տեղեկատվության աղբյուր էին դառնում նաև ոչ հայկական ընթերցողի համար: Բացի այդ հայտնի է, որ բոլոր նշված անգլալեզու շաբաթաթերթերին բաժանողագրված էր Ամերիկյան Պետ. դեպարտամենտի գրասենյակը: Դա հնարավորություն էր տալիս ամերիկյան քաղաքագետներին և պետական պաշտոնյաներին առանց աղճատումների ծանոթանալու հայկական կողմի դիրքորոշման հետ, որը հատկապես կարևոր և էական դարձավ Արցախյան շարժման տարիներին: Չմոռանա՞նք, որ ամերիկյան անգլալեզու մամուլը եղել է ոչ միայն ԱՄՆ հայկական քաղաքական էլիտայի, այլև համայն աշխարհի սփյուռքահայության հույզերի և տրամադրությունների արտահայտիչը: Անշուշտ դա պարտավորեցնող էր և թերթերի խմբագրությունները ձգտում էին ապահովել տպագրվող նյութի որակը:

Այդ ամենը մեզ ստիպեց կանգ առնել հենց այդ երեք թերթերի վրա, որոնք այսօր ԱՄՆ հայկական սփյուռքի ամենամշանավոր հրատարակություններն են և ունեն ամենամեծ տպաքանակ: Այսպես օրինակ, «Asbarez» ունի 8.000 տպաքանակ, «Armenian Reporter»՝ 3.000 և նույն տպաքանակն ունեն «Armenian Mirror Spectator»: Մյուս թերթերի տպաքանակը անհամեմատ ավելի

փոքր է /«Armenian Weekly»՝ 1.800 թերթ, «Abaka»՝ 1000 և այլն/, բացի այդ, որը նույնպես շատ էական է վերջիններից շատերը տպագրվում են ոչ կանոնավոր, երբեմն մեծ ընդմիջումներով:

Սակայն, դրա հետ մեկտեղ, քննվող թերթերն ունեն ևս մեկ կարևոր առանձնահատկություն՝ դրանք շահավետորեն տարբերում են ԱՄՆ մյուս հայկական տպագիր օրգաններից, քանի որ հրատարակվում են ԱՄՆ արևելյան նահանգներում և ունեն իրենց հրատարակչությունները թե՛ ԱՄՆ արևելքում, թե՛ արևմուտքում: Պատմականորեն այնպես է դասավորվել, որ եվրոպայի հետ ավելի սերտ կապված արևելյան նահանգները /Վիրջինիա, Նոր Անգլիա/ ավելի զարգացած էին քան ավելի ուշ յուրացված Միացյալ Նահանգների արևմտյան շրջանները: Դա վերաբերում է թե՛ ազգաբնակչության կրթական մակարդակին, թե՛ նրա կացութաձևին: Դրա հետևանքով Արևելյան ափամերձ գոտում են հրատարակվում ամենահայտնի ամերիկյան լրագրերը, որոնք մյուսներից առանձնանում են նյութի մատուցման բարձր մշակվածությամբ և լեզվի որակով: Նույնիսկ հպանցիկ և մակերեսային հայացքը թույլ է տալիս ամերիկյան պարբերականների օվկիանոսից առանձնացնել արևելյան ափին հրատարակվող այնպիսի լրագրեր ինչպիսիք են «Washington Post», «New York Times», «Chicago Tribune», «Boston Globe» և «Christian Science Monitor» և որոշ այլ թերթերը: Նրանցից շատերը հատկապես «Boston Globe» և «Christian Science Monitor» ունեն հայամետ ուղղվածություն, որը հատկապես ցայտուն արտահայտվեց ուսումնասիրվող շրջանում: Լինելով քրիստոնյա-ժողովրդավարական կողմնորոշում ունեցող թերթ «Christian Science Monitor» նախանձախնդիր էր համամարդկային արժեքներին և մեծագույն կարեկցանքով էր վերաբերում արևելյան քրիստոնյաներին, հատկապես հայերին: Վերջիններս, թերթի խմբագրության համոզմամբ, արդեն շատ վաղուց ապրում են քրիստոնյա և մահմեդական աշխարհների սահմանագլխին և մինչև օրս էլ շարունակում են կրել այդ դժվարին խաչը:

Բնական է, որ հենց այդ արևելյան ափում լույս ընծայվող թերթերին են աշխատակցում վերոնշյալ հայազգի լրագրողները, որոնք նյութեր են պատրաստում Կովկասի տարածաշրջանի և հատկապես Հայաստանի վերաբերյալ: Համագործակցելով Ամերիկյան լրատվաինֆոլուստրիայի հսկաների հետ հայ լրագրողները հնարավորություն ունեին լրատվական ծառայություններից առաջինը ստանալ թարմ և որակյալ տեղեկություններ: Բացի այդ սփյուռքահայ պարբերականի խմբագրություններն այս թերթերից էին արտատպում վերլուծական նյութի մի սովոր մասը: Ահա թե ինչու սփյուռքահայ մամուլի ամենահաջողված նյութերը մենք հանդիպում ենք հենց այդ թերթերում: